ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-23/39 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **17.11.2023թ.**

17.11.2023թթ. ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ **տնտեսական ապրանքների** ձեռքբերման **ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-23/39** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Ղազարյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի պահեստապետ՝ նախագահ,
Մ. Ղուկասյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի տնտեսական և սպասարկման վարչության ղեկավար՝ անդամ,
Ց. Սարգսյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի սպասարկման ծառայության պետ՝ անդամ,
Ա. Սահակյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի մեխանիկական արտադրամասի պետ՝ անդամ,
Լ. Տանդիլյան	«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժ/պ՝ անդամ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ղազարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ն. Բոյաջյանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

Հանձնաժողովը արձանագրեց.

Հաշվի առնելով, որ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կողմից հայտարարված՝ **տնտեսական ապրանքների ձեռքբերման ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-23/39** ծածկագրով գնման ընթացակարգով մրցույթի շրջանակներում հաղթող մասնակից «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այն է՝ «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից»:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով արձանագրված խախտումը 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղազարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Ղուկասյան _____

Ց. Սարգսյան _____

Ա. Սահակյան _____

Լ. Տանդիլյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ն. Բոյաջյան _____